

Փ Ո Ի Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Սմին օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիա պիտի վճարէ 100 թուոց համար խնկաւառաց մէջ 23 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ պզտ ըլլալով : — Մանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրին վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

Ընարութեան խնդիր մը՝ որ երկու ամիսէ ի վեր իբր թէ կլուծուէր ու չէր լուծուեր և հեալհետէ ուրիշ խնդիրներ ու գժտութիւններ կճնանէր, — հինգշաբթի օրը՝ սեպտ. 4, վերջապէս լուծուեցաւ ու վերջացաւ :

Նոյն օրը, երեսփոխանաց մեծադոյն մասին հաւանութեամբն ու քուէովը Պօլսոյ Պատրիարք ընարուեցաւ հասարակաց սիբելի ու ծանօթ ԱՄՆ. ՆԱՊԱՏԻԻ Տ. ՄԿԻՏԻՉ Ս. ԱՐԲԵՊԻՍ. ԿՈՊՈՍ ԽՐԸՄԵԱՆ : Ներկայ եղող հազարաւոր ազգայինք, պօլսեցիք ու գաւառայինք, խիստ ջերմ ծափահարութեամբ ընդունեցին այս ընտրութիւնը և կեցցէներով դրուատեցին Նորին Սրբազնութիւնը : Անմիջապէս երեսփոխանք ստորագրել սկսան ամենապատիւ խորմեանի պատրիարքական ընարութեան տեղեկագիրը, և թերևս այսօր կայսերական կառավարութեան կներկայացուի՝ օգոստ. Սուլթանին հաւանութիւնն ու վաւերացումը ընդունելու համար : Ընդհանուր ժողովոյ փոխատենագետ

Տատեան մեծապատիւ Ներսէս էֆէնտին նոյն օրը հեռագիր քաշելով կարին՝ ամենապատիւ խորմեանի խնացուց և ի դիմաց ազգին շնորհաւորեց :

Սհա՛ կշնորհաւորեմք մեք եւս՝ Նորին բարձր Սրբազնութիւնը, մեծաւ ուրախութեամբ սրտի : Կմաղթեմք որ ամենապատիւ խորմեան ինչպէս մինչև ցարդ նոյնպէս և այսուհետև իւր պատրիարքական գահակալութեան տոնն Աղգին օգտին յառաջադիմութեան ու անդորրութեան համար ամենայն անձնուիրութեամբ աշխատի : Կմաղթեմք որ Նորին ամեպատուութիւնը՝ ամենեկին անփոփոխ մնայ իւր հազուադիւր յատկութեանց մէջ, առանց երբէք աչառելու և առանց երբէք հետեւելու ազգամիասն հրապուրանաց :

Երեսփոխանական Ընդհանուր ժողովն հինգշաբթի օրը ընտրութեան այս մեծ գործը գրեթէ քառօրդ ժամու մէջ կատարեց, բայց ուրիշ խընդիր մը երկար կնճռոտ և ղայրացկոտ բանակուոյ մը ասպարէզ բացաւ : — Երեքշաբթի օրը փութացինք ծանուցանել Համադումար ժողովին վերջին նատին արդիւնքը, ինչպէս նաև իբրոյ

հրատարակեցինք ութ եպիսկոպոսաց կողմանէ առ վեհափառ կաթողիկոսն Եղիմածնի ուղղեալ հեռագրի մը ի մասսր : Կարգացողները կ'իշխեն թէ ութ եպիսկոպոսունք հեռագիր քաշած են Եղիմածին և վեհափառ Հայրապետին վճիռը ինդրած են թէ Սըսայ և Աղթամարաց եպիսկոպոսունք կրնան Պօլոյ պատրիարքական ընտբերեաց ցուցակին մէջ անցնիլ : Երեսփոխանաց ոմանք հինգշաբթի օրը ութ եպիսկոպոսաց այս հեռագրին դէմ խառն և ամենայն զօրութեամբ կրողքէին և կ'յայտնէին թէ ընդհանուր ժողովը երբէք այսպիսի խնդիր մը յարուցած չէ, և թէ ժողովին փափաքն էր իմանալ թէ՛ Սիւ ձեռնադրեալ վարժապետեան գեր : Երեսն եպիսկոպոսը, ըստ որում Եղիմածնի վեհափառ Հայրապետէն պատուեալ է և օրհնութեան կանոնի ընդունած և հայրապետական ընտրութեան ի դիմաց ազգին մասնակցած է, իբրև Եղիմածնական եպիսկոպոս համարուելով պատրիարքական ընտբերեաց ցուցակին մէջ կրնայ գրուիլ, ինչպէս նաեւ այս հանդամանքներն ունեցող ուրիշ Սասկան եպիսկոպոսունք : Երեսփոխանք այս կրտէին և կցուցնէին թէ Համադումար ժողովն ու ութ եպիսկոպոսունք ընդհանուր ժողովոյ յիշեալ առաջարկութիւնը բոլորովին այլայլած ու խնդրոյն ընդհանուր ու ծանր կերպարանք մը տալով վեհափառ Հայրապետին առջև ամբաստաներ են ժողովը : — Երբայէ յեան գերիարկէն եպիսկոպոսը, ի դիմաց Համադումարին և գլխաւորաբար ութ եպիսկոպոսաց, — ամեն ճիգ կ'ընենք

հաստատելու համար թէ ընդհանուր ժողովոյն նախորդ նախն առաջարկութիւնն այս չէր և թէ եկեղեցականք իրենց պարտքը կատարած և եպիսկոպոսունք առ Սրարատեան մայրաթոռն իրենց հաւատարմութեան հաւատարմքն յայտնած են : Ժամեր կանցնէին, և տակաւին երկու կողմանէ վիճաբանութիւնները տարապնջման սասակութեամբ առաջ կը տարուէին, երեսփոխանաց մէկը կառաջարկէր պարտականաց քուէ տալ ութ եպիսկոպոսաց համար ժողովին առաջարկութիւնը այլայլած ըլլալու ամբաստանութեամբ, ուրիշ մը կ'յայտնէր թէ մասնաժողով մը կազմուի քըննութեան համար : անդիէն մէկն ալ ութ եպիսկոպոսաց ներողութիւն տալ խոհեմութիւն կը առէր և բաւական կ'համարէր հեռագրով վեհափառ կաթողիկոսին իմացուել ընդհանուր ժողովին բուն առաջարկութիւնը և Նորին վեհափառութեան ուղղել տրածանագրութիւնները : Վիճաբանութիւնը այս ամտիճանէն ալ բարձրանալով, երկու կողմանէ ծանր ու նախատական խօսքեր ալ թուելով ժողովոյն պատկառանքը սրահ մը կորուսին և ներկայ եղող ժողովրդեան յառաջարկանք պատճառեցին : (Մեկը ութ եպիսկոպոսներէն կ'ըսէին թէ « խալթ իթաիք » ըսեն, ուրիշ մը « ստախօս » կանուանէր զանոնք, եւ այլն) :
 Վերջապէս մեծ գծաւորութեամբ որոշուեցաւ որ ընդհանուր ժողովը բոլոր ուրիշ առաջարկութիւնները մէկդի դնելով, բաւական համար վեհափառ կաթողիկոսին յայտնել

խոր առաջարկութեան ինչ ըլլալը : Եւ
ատենանք գոցուեցաւ :

Ներկայ եզրոյ ժողովրդեան կողմանէ,
ատենանք գոցուելէն յետոյ, մէկ
քանի անգամ շրջապատեցաւ Նար-
պէյեան դեր, խորէն եպիսկոպոս և
չնորհակալութիւններ ու ծափահա-
րութիւններ ընդունեցաւ իւր ըրած
վիճաբանութեան ու ատենախօսու-
թեանց համար :

Ինտոյութիւն ընելու դալով, շատ
ցաւալի էր տեսնել որ երեսփոխանա-
կան ժողովի մը մէջ յանդուգն ու խիստ
անվայել կերպով խօսողներ կգտնուե-
ին : Մասնաւորապէս երեսփոխան մը
որ եպիսկոպոսաց «խալթ իթաիք»
ըսելին կպահանջէր, ներկայ ժող-
ովրդեան կողմանէ ծանր կերպիւ մե-
ղադրուեցաւ : Կիրքը սյլադունած էր
երեսփոխանաց մէկ քանին, և հետեւ
ւարար զսյրացմամբ ու թշնամանօք
կխօսէին : Ատենախօսանքէն մէկը՝ ո-
րուն ճարտարախօսութիւնն ու տա-
ղանդը զմայլելի է, նոյն օրը մեր
մէկ սխալն ուղղեց : մենք այնպէս գի-
տէինք թէ նա միանգամայն հանդար-
տախօս է : Մէկ խօսքով երեսփոխա-
նաց այս նիստը աղէկ հաւատացեց թէ
այնպիսիներ կան մէջերնին, որ չէ թէ
աղղի մը այլ մէկ անհատի մը ամենա-
թեթեւ մէկ խնդրոյն համար երեսփո-
խանը ըլլալու կարողութիւնն չունին :
Միայն այս անտեղութիւնները չեն .
երեսփոխանին մէկը կընանար ու կը
խորդայր, երբ բոլոր ատենանք յուղ-
եալ, խօսելու կարգը խանդարած
կաթապին տանձարձակ : Թող խումբ
մը այն կամ ոչ ըսողները կամ ձեռք
վերցունող ու իջեցողները :

Վերջապէս, ցաւ ի սիրտ տեսանք
որ աղղին համար օգտակար պիտի
ըլլայ եթէ արդի երեսփոխանական
ժողովին վերակազմութիւնը ըլլայ ըստ
արդի Սահմանադրութեան : Տեսանք
որ ժողովրդեան այս մասին յայտնած
փափաքը ճշմարտ է : Մենքիմիւ եմք
թէ այս ժողովրդական փափաքը ան-
յապաղ ի գործ պիտի դրուի, քանի
որ ժողովրդեան սիրած այն պատ-
ուական արքեպիսկոպոսն՝ ամենա-
պատիւ խորմեան՝ քիչ օրէն պիտի գայ
բազմի թուրքիոյ Հայոց պատրիար-
քական բարձր գահուն վրայ :

Կլեմք թէ, Մամուլ հանդիսին
խմբադրութեան կողմանէ Շուրպի
Տէվէթի վեմ, նախագահին աղեր-
սագիր արուելով վերաքննութիւն
խնդրուեր է :

— Խնդրուող Սէլամիյէ թաղին
պատուարժան բնակիչներէն ամանք
յանձնարարութիւն կընեն մեզ հար-
ցնել յիշեալ թաղի մեծարգոյ խոր-
հրդոյն թէ, իրան է որ Մամուլ հան-
դիսի խմբադրին հետ դատուելու
դացող խորհրդականները օտարիա-
նութենէն խնդրեր են խմբադրին բան-
տարկութեան տեղը փոխել, մինչդեռ
նա քիչ մը հանդիսա ընելու տեղ մը
դրուած է եղեր :

— Նորընտիր ամեն Ս. Պատրիար-
քին հրաւիրակ սրտուեր են խղճախ
առաջնորդ դեր . Նիկողոսոս եպիս-
կոպոսն և Գափու քեահեառը մեծ
Յարութիւն էֆէնտին :

Գանտլիտէն այս առաւօտ բաց-
ուեցաւ 46 դուրուշ 11 փարսյով, և

Ժամը 20ւկէսին 46 զըշ 8 փարայ էր :

—Չորրորդ կարգի Մէճիտիյէ պատուանշան տրուեցաւ Էվգաֆի Թահսիլաթ միւտիրի Էմին պէյին :

—Երրորդ աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատար անուանեցաւ վէզնէտար Յակօբ Էֆէնտի :

—Տիվանը ահքեամը—ատլիյէի Միւմէյիզ կարգեցաւ վիչէն Էֆէնտի :

—Էվգաֆի վէզնէտար Յովսէփ Էֆէնտիին երրորդ աստիճանի պաշտօնատարութիւն տրուեցաւ :

—Մեծ կղզւոյն բնակչաց խնդրովը , Ֆէվայիտի—օսմանիյէի անօրինութիւնը յատկապէս շողենաւ մը ուրոշեր է՝ կամուրջէն ուղղակի յիշեալ կղզին երթալու և անկէց ուղղակի կամուրջ դալու պայմանաւ , առանց ուրիշ տեղ հանդիպելու : Մեծ կղզւոյն բնակիչները այս կարգադրութեան վրայ վերջապէս գոհ եղեր են , որովհետև մէկ ժամէն պակաս ժամանակի մէջ կղզին կերթան և նոյնչափ միջոցի մէջ կամուրջ կուզան :

—Կիրակէ առաւօտուն Իզմիրի մէջ սաստիկ բայց բարեբաղդաբար անվնաս դեանաշարժ մը պատահեր է :

—Միտիլլի մէջ տեղական իշխանութեան կողմանէ երկու դերեվաճառներ բռնուելով յանդիմանուեր , և ծախելու բերուած հինգ այր և երկու կին գերիները ձեռքերնէն առնուեր են : Կանանց համար մերամուսիներն են ըսեր են , բայց յետոյ չին կրցեր ծածկել :


—Մարդարայի (Թէքիրտաղ) մէջ Լամպօ անուն գործաւորի մը կինը նախորդ ամսոյն 16ին տղայ մը ծներ է , ծնօտը կուրծքին փակած , ձեռքերն

ու ռաքերը քաշուած , և կունակը ուռի պէս բան մը : Ասի ժամ մը միայն ապրելէն յետոյ մեռեր է :




Օրթագիւղ Թաշ—վերտիվէն Շահին—օղլու փողոցը խուրուեան Գարրիէլ աղային մեծ տանը քովը 2300 կանգունի վրայ շինուած տուն մը կայ ծախու , մէջը բաւական պարտէզով և ծովահայեաց , նաև շուրի հաստատուն խաշուով :

Ով որ ծախու առնել ուզէ , Գուգ կունճուգի Յունաց եկեղեցւոյն քով 108 թիւ տունը երթալ ու տեսնելու է խուրուեան Գարրիէլ աղայն :



Պահու միւտնատորը , իշխանութիւնը և ընչապէս պիտահար

Այս հանրածանօթ և ընտիր վէպին թարգմանութեան ու տպագրութեան ձեռք զարնուած է , շաբաթը 16ական երեսէ բազկացեալ երկերկու մեծագիր թերթեր հրատարակելով : Բաժանորդագրութեան գինն է մէկուկէս տրծաթ մէճիտ . իսկ զատ թիւ առնել ուղղը հատին 2 զուրուշ պիտի վճարէ : —Բաժանորդագրութեան տեղըն է Պ. Յ. Գալաֆեանի գրատունը , և Չորապօի խանին դէմ թիւ 11 վաճառանոցը :



ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ . Ս . ԱԼԱՃԱՃ ԵՒ Ս
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ . Յ . ԳԻՐԳՁԱՆ